Արհեստաւորը ոչինչ չխօսեց: Տէր հայրը մօտեցաւ եւ, ինձ տեսնելով, ամենեւին ծանօթութիւն չտուեց, չնայելով, որ անցեալ գիշերը Ասլանի հետ նրա տանն էինք: Նա ողջունեց եւ նստեց մեզ մօտ: Երեցփոխանը եւ թաղական խորհրդի անդամը իսկոյն վեր կացան եւ հեռացան, որպէս ժանտախտից: Արհեստաւորը մնաց: Տէր հայրը նրա առողջութիւնը հարցնելուց յետոյ դարձաւ դէպի ինձ:

— Դուք, երեւի, օտար երկրից էք, պարոն:

— Այո՛ , այն եւրոպացի բժշկի թարգմանն եմ, — պատասխանեցի ես: — Տանը ծանձրացայ, եկայ այստեղ մի փոքր զովանալու:

— Լաւ էք արել, որդի, մեր վանեցոց զարհուրելիները կը տեսնէք եւ նրանց կեանքի հետ կը ծանօթանաք:

Արհեստաւորը իր ընդհատուած նկատողութիւնները շարունակեց:

— Պէտք է Պոլսում տեսնել այդ մարդկանց եւ այնտեղ ծանօթանալ վանեցու կեանքի հետ: Տեսնո՞ւմ էք, այստեղ այսպէս զուգուած, զարդարուած, անհոգ ման են գալիս, զարհուրանում են, կարծես բախտից այլեւս ոչինչ պահանջելիք չունեն, ամէն բարիքներով լի են: Բայց Պոլսում կը տեսնէք դրանց կեղտի մէջ կորած, պատառոտուած հագուստներով, քաղցած, անգործ թափառում են, շատ անգամ մուրացկանութիւն են անում: Հէնց որ մի պարապմունք կը գտնեն եւ այնքան փող կը վաստակեն, որ նրանով կարող լինեն ծովը անցնել եւ մի քանի ամիս իրանց տներում ապրել, տեսար, իսկոյն մի ձեռք նոր հագուստ կը գնեն եւ ճանապարհ կը նկնեն: Տանը նրանք անձնատուր են լինում վերին աստիճանի շռայլութեան, բոլորովին մոռանալով, թէ որքան դժուարութեամբ են վաստակել բերած փողերը: Շատերը տարիներով Պոլսում ընկած են, որովհետեւ ծովը անցնելու փող չեն գտնում: Պէտք է շնորհակալ լինել, որ այդ օրինեալ ծովը մեծ ծառայութիւն է անում մեզ: Եթէ նա մէջտեղում չլինէր, բոլոր վանեցիք Պոլսում կը լինէին: Ցամաքը նրանք կարող են ոտքով անցնել, բայց ծովը անցնելու համար պէտք է փող վճարել, իսկ այդ փողը գտնելը հեշտ չէ վանեցու համար: Նա պէտք է ամէն ինչ գրաւ դնէ, որ իրան պէտք եղած փողը տան:

— Միթէ՞ Պոլսում այդ շռայլութիւնները չեն անում, — նկատեց տէր հայրը: — Այնտեղ էլ այդպէս են:

— Այո՛, այդպէս են: Շատերը մոռանում են հայրենական տուն, տեղ, ընտանիք եւ մինչեւ մահ մնում են այնտեղ: Այդ թշուառների կեանքը աւելի ցաւակցութեան արժանի է: Օրերով, ամիսներով կաշխատեն, հէնց որ մի քանի ղուրուշ ձեռք ձգեցին, բոլորը մի օրոայ մէջ կը վատնեն: Այդ օրերում անկա-